

3620



ՓԱՅԼՈՒՆ
ԱՐԵՒ



Ա. ՏԱՐԻ




Գ. ԻՐԱՆԵՆ



491.99-8

է -16



2010

FD 2002

491 99-8

5-16

ԳՈՒՐԳԷՆ ԷԴԻԼԵԱՆ

ՓԱՅԼՈՒՆ ԱՐԵԻ

ՉԵՌԱԳԻՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Ե Ի

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1918

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱԻՈՐ» Գովովիկոսի պրոպ. № 39.

1918

28509-4, 2



11502-57



III



nz



f



u nɫ ɟ

u

uu ɟ u'ɫu

uu uɫu ɟ uu ɟ

u

u nɫ ɟ



ɟ

uu ɟ

uu ɟ uu ɟ

ɟ nɫ ɟ



նէ անէ


իշ ասա իշ ասա

իշ իշ

ւն էշ ւն էշ

անա է

նէ անէ



Տ
Իր արքա լաւա՛ն է
անէս ճաշոնս ճաշ-ճաշ

իւ

իւաշ արքա իւա՛ն է լաւիւն լաւիւն
չ ւնի իւնչի ի՞նչ ճաշ
աս իւնչոն է լաւ անա՛ն անէս
արքա ճաշ արքա ճաշ



ը

արի՛ Սրա, Սրա՛, Սրա՛,
Սրա՛ն

շարժշար

ճարճ

րա րա րա

րա րա րա

րա րա րա



ն

Սրա՛ն Սրա՛ն Սրա՛ն:

Սա սրա՛ն է իր շարճ:

Սրա՛ն սա՛ն է շարճ.

Սա Սա Սա

նր նր նր

Սա՛ն Սրա՛ն

ի՛ր սրա՛ն Սրա՛ն

արի, արի ի՛ր սրա՛ն Սրա՛ն:

uy

uy թ՛ սրբուն, uy թ՛ նաշխուն
Եռշան. սո՛ւ Եռշան.

նա նա նա՛

նէ նր նէ նր թ՛ Եռշան:

o

Եռշան սո՛ւ արա է.

օրօր օրօր թ՛ Եռշան

նէ նր, նէ նր թ՛ սրբուն

ա՛ ա՛, ա՛ ա՛

Վաչր օրօրուն է Եռշանին,

Նաչր օրօր է ասուն:

h

Նհա հարս. հա՛րս, ա՛սս,
նր է Նրոս: հարս
անժու է:


Ոհ, ոհ, ա՛սս, թո՛ւր, նր է
Նրոս. Նչ, աչ Նրոս:

ի ռ

Սոթէնր փայուն է: հասաւ.
օհ, փահանը նաւր փրա է.
նաւր օրօրուն է:

Փահանր փայ փայ է անուն:
Փահան, Փահան, ի՛ր փաւր,

Տի փարիք, հաւար, հաւար:



1

-Մի ուր, աչ ըր սաչ, ըր
շուարն. նաչր Լուսո, շմէ է
շուարնը, սրրոնն է սաչր:

-Լաւ է, Վահան.

սա էլ շաւ է, սրրունն ուր է:



Սրաւը թաղ է անուն, աղ-
ւէան էլ փաղէփաղ հաւանուն
է հաւրն:

Չա՛ ղա՛ ղա՛ է անունըսաչր:

Լաւն է Սրաւը, շաւն է
շունը, փաղուն է Սրաւը,
փաղուն է շունը: Եունը հա-
ւանն է աղւէարն, փաղաղւէարն:

n

Առթեր Տայր-Չարոհերն
նոռն ունէր Տառանուն:

Առթեր առնուն է թնւր
նոռն ու աւուն Տորր.-Այս
թնւր նոռնը նրարի Արարին,
Չապարին, Առուշանին:

-Լաւ, Առթեր. առ այս ի
նոռնն էլ Արայր հաճար:


ա n

-Առիտ է, առիտ:

-Մայ, ի՞նչ Առթեր առիտ է:

Առա, Առթեր, այ նոր
չորս հանել, Տորր փառել ու
խաչ անել. այ այ խաչ եւ
անուն:

Մառանուն խօսուն էր
Առթերն ու իր Տայր:



I

Դա՛հ հրաւիրի, Դա՛հար, Դա՛հ
հրաւիրի Միւսարն, փայ, էլի՛
անշարժ եւ: Դի՛ր, Դի՛ր. փայր:



փ

- Մահան, փայանի էլը. փեր
ան Օհանի շորերը, նրա նոր
փափաքը, ի՞նչ անան ան ու
հասր Օհանին. Օհանը ան-
շի արին է հրձա:

Մահանը շուն է հորն ու
փայանուն է էլը:



բ


- Թիթն, Անրէն, աչ սրուն
թիթն: Անրէնը փայուն է,

ուրուն է թիթնին հասնել:

- Անրէն, ի՞նչ փայլը, ի՞նչ փա-
յլը, անուն, անուն:

Անրէնն էլ է փայուն:
Ի՞նչ էլ թրրի...

յ Բայրն ու Անրէնը
- հայր հանգիստ լինել,



Անըրէն, անօր է, անօր: Այ
 քանք ե՞ն հոշուցուն, հայ ե՞ն
 քրտւոյն: անու արա:

-հա. սոյ շառ է: հրճա քա-
 դա՛ն, հա:


-Քննիա, սիրունա, փայր, փայ
 փայ արա:



ս

Պապն ու քոռը
 -Ա՛նն արի, սիրուն Շուշան:
 հոյ, հոյ, հոյ շա հոյ.
 քր՛ն, քր՛ն, քրքրքան Շու-
 շան:

Պայ փախուցա՛ն: Այ, սոյ
 փառն. ծրա՛ն: Լայ ծր լիւր,
 սիրուն ճշնոյն, պար արի,
 պապար արա: Կորից, Կո-
 րից:



Կ Առէրն ու էր
 էր խոյ էր ուրուս պա-
 րի ծօր: Առէրն րեաւ
 իշն, ծօրեցաւ ու փայրով
 խրիւ: Էն էլ նրան:

Առէրն լաց լիւնով
 րուն փայտ:

-Ը, ը, էր, էր. րաւ րի,
 աչ րաւր, արի, է:

ֆ Աղփայր

-Մաւր, պաւր, շուր ֆր-
 ֆրէյ աղփայր շորտր. իս
 էլ ֆարով ու փայրով խրիւ
 ծօր շաւր: Աղփայր հայ է
 ուրուն:

-Մաւրն աւա, Արուն, րա-
 ր ծաւանունն է:

Արուն փայուն է րաւր
 ծօր, արանուն է ի հայ
 ու րաւր աղփայրն:




Կ

Կրռռնկներ

Կրռ, Կրռ Կրռկրռան,
Կրռռնկները, րես, թրռան:

Կարռ

Կարռն ուրռն է թիւ, ծռկ,
կերակոռ, շակոռն է կար.
իւրեւ ծարժիւր ծափոռն է
թաթիկներով ու յեղւով. սր-
ռոռն է քափ րեղ իրնեղ:



Է

Լիյաօր փարոռն եւ Լիւաւ
հողը: Լիւաւն աւոռն է
հարաւն.

-Ենդեր, փար անողներ
հաւար փեր առ չորս հայ,
պանիր, իւր թռռ, չորթան ու
քար փարեղարեղ:

Եողերը քանոռն է: Կար
անողները րեսնոռն եւ հար-

սրն, ուրախանում եմ ու
կանչում.

-Քի՛, քի՛, հօ արա: Չա՛յո
Լաքն, շուր արե՛ք: հօ ւ՛, հո-
ռոյ՛կ ւ՛, հօ հօ հօ...

բ և

Մահանք խանութք
Կոյակք, Ուրբէնք, Փառ-
նակք, Փանոսք, Չապարն
և Չափարք հաւաքելու եմ
Մահանդեպ տուն: Այսպէս

այնպէս զանազան բաներ
եմ խոստով և խանութք սար-
կել:

Մահանք նստել է խանութ-
քի ծօր և կանչում է.

-հարեցե՛ք, այս կողմ հարե-
ցե՛ք: Այ շառ բաժակներ, քե-
սակ-քեսակ բանալիներ, ծա-
խոք բաժակ, բարակ քել,
ստեղ, հաց, պանիր: հա՛ւե՛ք,
առե՛ք, քարե՛ք: է՛ Ժան է՛, շար է՛
է՛ Ժան. պա՛, պա՛, պա՛...

Ճ



Ճրպո՞ւ և բայէն

Ճրպո՞ւ ծառին ծղրղուն՝ է.

ծիւ, ծիւ, ծիւ...

Բայէն վերը պրորպուն՝ է.

վնչ, վնչ, վնչ...

Ճրպո՞ւ լռեց, Ճրպո՞ւ վարեց,

վայ, վայ, վայ...

Բա՛յէ, բռռռ, բա՛յէ, բռռռ

հայ, հայ, հայ...

Բայէն թռաւ, բայէն փախաւ,

թնչ լաւ էլաւ, հէ, հէ հէ...

Է գ Զու, գու, Զուրիկներ,

Չայիկ-Չայիկ Չարիներ,

Կարճիր Կարար աջարներ,

Սողաւնոցի աչ աղաներ:

Եռար, հա, շուր. աշխաւ կուր,

հաճեցէ՛ք, անուշ արէ՛ք,

Կըշքապէ՛ք, գուր իրճեցէ՛ք

Ու հեռապէ՛ք, ֆուգուգ արէ՛ք:

Զուրերն ուրուն՝ եւ ԷրԶու-


ներ, ցորեմի և հաճարի հա-

րիկներ և ուրիշ շար բաներ:

գ Գրի՛ց, արի յի գիր գրեմ
 Գայռաւորն,
 Վի գիր գրեմ, նա՛մակ գրեմ
 Գայռաւորն:

Վեր Գայռաւոր ինձ գրեց
 ք գիրքէ,
 Նա ուրիշին գո՛ւց քաւր լաւ
 գիրքէ:

Գրի՛ց, արի յի գիր գրեմ
 Գայռաւորն,
 Վի գիր գրեմ, նա՛մակ գրեմ
 Գայռաւորն:



դ

Պաւրթը հիւանդ է, դէ՛մբ
 դեղնեց է, դեղ խճեղուց բո-
 յորովին պչեց է. խը՛նու՛ է
 յիւշն կար:

Վարժն հիւանդի հա՛մար
 կար է բերու՛մ և հարցնու՛մ.
 -Ինչպէ՛ս ես, Պաւրթ գա՛ն:
 -Վի, գո՛ւրսս ցաւու՛մ է. Վա-
 րժ, յի ի՛նչ գուր բեր:



Հ Զրն է գայիս սպիրակ,
սպիրակ,
Կաժ է նրապուն՝ փափունկ
խաբակ.

Մանուկները ցրրաբուն՝ ուրախ
Սկսուն՝ եւն թունդ չիւնախաղ:

Ք չ Քողոցով ի՞նչ փայրուն էր
անցնուն: Փայրունի ղէզ նրա-
քաժ էին ի՞նչ կին, անունը



Առնունքար ե
ի՞նչ աղգիկ, ա-
նունը Զաւարկ:

Զաւարկի չեռքին ի՞նչ կա-
քուն կար:

Բողաքը քեւաւ կաքունն ե
չանկարժ փայտեղ-դէպի փայ-
րունը, բայց ի՞նչ-կարող էր
անել: Փայրունը անցաւ, հե-
ռացաւ, իսկ չիւնը Բողաքն
էլ հափ-հափ անելով քունն
դարչաւ:

չ շ շուն

ոչ ու

ն ն

ս ս

ա ա



սա շուն է

շուն 1 շուն

2 շուն

հ հ

հասիր

խ ի

հասիր, այ շուն, հասիր հն, հասիր.

ր ր



աչ աչ

փ փ

փախան, փախան. հասիր,

խ ի

հասիր հն, հասիր.

օ օ

փրօ, փրօ

չ լ փրօն փախաւ



հասիր այ շուն, փախաւ, փրօն փախաւ.

հնսաւ, հնսաւ.

այ մի փրօ

ժ մ փրօ

ֆ է փրօ




միաճ

միաճ


փրօն հիմա ուրախ է

զ զ փիսօն խաղում է. այս փիսօն խա-
 ղում է, այն փիսօն վաղում է. շունը
 խաղում է, այս շունը խաղում է,
 ը ը այն շունը վաղում է.
 փիսօն նաղ է անում, շունը վաղ-վաղ
 Կ Գ է անում:



լ Լ Լուսօն ու վահանը Մ Մ
 Լ Լ Մ Մ
 —Մի ուր, այ մի սայլ, մի լուսին. նա-
 յի Լուսօ, լուս է Լուսինը, սիրո՞ւն է սայլը:
 —Լաւ է, վահան, լաւ է. սա էլ լաւ է,
 սիրուն ուլ է:

Թ ռ ռ Ե Մ թ
 Թ ռ ռ Ե Թորոսի խանութում Ա թ
 —Այ լաւ նուռ, լաւ թեր, թարխուն, սոխ.
 ան, Անուշ խանում, ան:
 —Թորոս, միայն թեր ու սոխ եմ ու-
 ղում, թարխունը թառամել է:
 —Թե՛ր, ապեղ, լաւ թագեր էլ ունեմ. ան
 Անուշ խանում, ան:



Կ Գ Դաւիթն ու Աշխէնը
 Կ Գ Դաւիթն ու Աշխէնը նըստել էին տան
 դռանը, խօսում էին ու իրար հանելուկներ
 հարցնում: Դաւիթն ասում է.
 —Աշխէն, հիմա մի ուրիշ տեսակ հանե-
 լուկ եմ ասելու. դէ մի անա, տեսնեմ, թէ
 ո՞ւր էի այսօր:
 —Ֆարումն էիր, Դաւիթ, տըրեխներից
 դարմանն այդ է ասում:

— ԼճԼ. դէ ասա, տեսնեմ, այսօր սալոր
եմ կերել, թէ սեխ:

— Դէ, դէ, սո՛ւս արա. դու հոն ես կերել.
Այ, այ, թըշերիդ վրայի կարմիր տեղերը:

— Կեցցէ՛ Ս. շխէնը, կեցցէ՛. ուղիղ է, շատ
ուղիղ է:

Նազիկի կանաչին

բ բ

Նազիկենց պարտէզում

է շ տեսակ-տեսակ կանաչի կար: Ա Ն
Մի օր Նազիկին այնտեղից կա-

այ պ նաչի է բերում տուն. կանաչին ցե-
խոտ էր: Նազիկին ասում է մօրը.

— Սապոն տամ, մայրիկ:

— Սիրունիկս, ինչի՞ համար ես ուզում
սապոնը. տիկնիկիդ շորերն ես լրանալու:

— Կանաչին եմ լրանալու, մայրիկ. կա-
նաչին շատ է կեղտոտ:

Պահմըտոցի

գ գ

— Հայկանուշ ինձ գրտի,

չ ձ կո՛ւ կո՛ւ. Տիգրան, դէ դու գրտի. կո՛ւ կո՛ւ. — սայլի տակից

Պ Պ բարակ ձայնով կանչում է Գո-
հարիկը:

Ա Ս


Ա Ն

հ շ

գ գ

Ս Տ

— Սպասի, սպասի, այս րոպէին: Այստեղ
չէ, այստեղ էլ չէ. ա՛, այնտեղ կը լինի. բայց



այնտեղ էլ չէ: Տիգրան,
էս ո՛ւր է կորել Գոհա-
րիկը:

— Տիգրան, կու՛կո՛ւ:

Դէ գրտի է, Հայկանուշ, կու՛կո՛ւ:

— Ա՛, ձայնն այն կողմից է գալիս. — ա-
սում է Հայկանուշը, վազում է դէպի սայլն
ու բըռնում Գոհարիկին:

— Հը՛, տեսա՛ր, ինձ Հայկանուշ կասեն.
տեսա՛ր ինչպէս շուտ բըռնեցի: Տիգրան դէ
հիմա էլ դու պահւիր:

Զ ճ

Ճրնճըղուկներ

Զ ճ

Տատը բախում ցորեն էր
ֆ ք փռուել չորացնելու համար: ֆ ք
Ճրնճըղուկները տեսան. ու-

րախ-ուրախ ճըլճըրացին ու վրա թըռան: Քար
շրպրտեց տատը, ճրնճըղուկները թըռան-փա-
խան:

Քիչ անց էլի հաւաքւեցին, տատը նորից
փախցրեց. էլի հաւաքւեցին, նորից փախցը-
րեց. էլի ու էլի հաւաքւեցին:

Տատն ինքն իրեն միտք է անում ու ասում.

—Պահ, պահ, պահ, ճընճըղուկները ճանճե-
րից աւելի աներես են, հա՛: Թըռ, թըռ. կո-
րէք անախտաններ, թըռ, թըռ, թըռ...



Ճ

ժ


Յ

Ծ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի հւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ:

Թ Ի

Ծուղրուղո՛ւ, ինձ տեսէք,
ծուղրուղո՛ւ, ինձ լսեցէք,
ծուղրուղո՛ւ, լաւ իմացէք,
Իսկուհի տատի աքլորն եմ:



Ո Ռ

Ս ժ

Լ և

Սյւրին և Բողարը Ո Ռ
Ռզնին և Բողարը Լ և

Ռզնին զաշտում մուկ էր որսում: Հենց
այդ ժամանակ Բողարն անցնում էր ողնու
մօտով: Նա տեսաւ ողնուն և մըտածեց. այ
լաւ որս, և առանց ժամանակ կորցնելու, վրա
վազեց:

Ռզնին ժամանակին լսել էր շան ոտնա-
ձայնը և կըծկրւէր: Բողարը ողնու վրա ըն-
կաւ, որ ոտից բռնի, բայց փշերը ծակոտե-
ցին Բողարի բերանը:

Բողարը թողեց ողնուն և ոռնալով տուն
փախաւ:

Ե Ե Պառաւ նանը կանչում է
 ԶճԼ, ջճԼ, ջճԼ, իմ վառիկներ,
 Գ Ղ սիրուն ճուտեր, հաւ մարիներ,
 Զ Ձ ոսկէփետուր աքլարիկներ,
 Եկէք, կերէք ձեր հատիկներ:

Ահա, ահա, անուշ արէք,
 վեր քաղեցէք, կուշտ-կուշտ կերէք:
 Ես տուն կերթամ, քուջուջ արէք,
 երբ որ կանչեմ, ահանջ արէք:

Դ Դ Անձրեւի տակ
 Կ Յ Զ Զ

Ղ Ռ 1
 Ես, Երւանդը, Ռէհանը, Ծու-
 շիկը, Զարուհին, մեր հարեանի տղաներ՝ Յո-
 լակը, Շաւարշը, Զաքարը, Յակոբը և Յով-
 սէփը մեր այգուց վերադառնում էինք տուն:

Երբ դեռ ճանապարհին էինք, արեւ մտաւ
 սև-սև ամպերի յետեր, որոտ լուեց և յան-
 կարծ սկսեց անձրեւ գալ: Մենք մըտանք մի
 ծառի տակ, բայց քիչ անց անձրեւի կաթիլ-

ները սկսեցին թափւել մեզ վրա: Ճար չըկար,
 ծառի տակից դուրս եկանք և տուն փախանք:

2.

Տուն հասանք. դեռ անձրեւ էր գալիս:
 Բոլորս էլ հաւաքւեցինք մեր պատշգամբը
 և միասին երգեցինք:

Անձրեւ, անձրեւ, ցած արի,
 Բըսցուր ցորեն ու գարի,
 Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
 Աւլէ փոշի, մաքրէ օդ:
 Անձրեւ, անձրեւ, ցած արի,
 Գալգ ամենիս բարի:

Իւ Իւ Գիւղացու աշխատանքը
 Ղ Ռ Խորէն, ճլզում ես իմանալ, ինչպէս է
 ցորեն սերմում գիւ-
 ղացին:

Իւ Խ Գիւղացին ցորենն
 այսպէս է սերմում:
 Ուզում ես իմանալ, ինչ-
 պէս է ցորեն հնձում գիւ-
 ղացին:

Գիւղացին ցորենն այ






այսպէս է հնձում:
Ուզում ես ի-
մանալ, ինչպէս է
ցորեն կասում
գիւղացին:

Գիւղացին
ցորենը, տես,
այսպէս է կա-
սում:

Ուզում ես
իմանալ, ինչ-
պէս է ցորեն



աղում և ալիւր
շինում գիւղա-
ցին:

Գիւղացին ցո-
րենն ահա այս-
պէս է աղում և
ալիւր շինում:

Բարիւրյոյս

ոյ ոյ

Լուսացաւ

Լուսացաւ

Լոյսն է բարին,

Ծիտն է ծառին

Հաւն է թառին:

Աշխատաւոր վեր կաց, բանի,
Ծոյլ տըղայի քունը կը տանի,
Տըրեխները շունը կը տանի:

Չարաճըճի Փառնակը


Ժամհարեան Փառնակը եօթ **Չ Չ**
տարեկան մի չարաճըճի տղայ
էր. նա ծեծում էր իւր քոյր **Չ Չ**
Մանեակին և եղբայր Ընձա-
կին. քարեր էր խրփում շնե- **Չ Չ**
րին. սենեակի իրերն այս ու
այն կողմն էր շրպրտում: **Չ Չ**
Փառնակի հայրը՝ Հազարը
միշտ ասում էր. **Չ Չ**

— Չարութիւն մի անիր, որդեակ,
խելօք կաց, հոգեակ. գլխիդ մի անըախտու-
թիւն կը գայ, ան յիմար. անխ, ան չար երե-
խայ, արդեօք խելօքանալիւ ես:

Փառնակը չէր լսում հօրը:

2

Ձմեռւայ մի ցուրտ օր, դըպրոցից յետ
զալիս, Փառնակը տեսաւ, որ իրենց տան
սիւնից մի ձի է կապած: Նա իսկոյն մօտե-
ցաւ և ձեռքի փայտովն ամուր խրփեց ձիու
ոտներին:



Ձին քացի տըւեց Փառնակի փորին, Փառ-
նակը վայր ընկաւ ձիւնի վրա: Ծնողները ե-
կան և նրան սենեակ տարան: Փառնակը
եօթն օր անկողնում պառկած մնաց:

Ֆ ֆ

Փիսօն

Փիսօն-փիսօն փափկամազ

Տանից փախաւ վազէվազ,

Ուզեց մտնի ամբարը,

Ետքից հասաւ Չամբարը:

Կռիւն ընկաւ մէջները,

Վեր տնկեցին պոչները.

Փիսօն արաւ փիֆ-փաֆ-փաֆ,

Չամբարն արաւ հաֆ-հաֆ-հաֆ:

Անուն-ազգանուններ


Օհան Չալաբեան, Էմմա Ղուկասեան,
Փահրատ Խոսրովեան, Յակոբ Փալեան, Իսա-
հակ Բուսինեան:

Եղիշէ Երւանդեան

Եկապետիքի Եմոսեան

Աս	Բբ	Գգ	Դդ	Եե
Զզ	Ծծ	Լլ	Քք	Ժժ
Իի	Լլ	Խխ	Ճճ	Կկ
ԽԽ	Զզ	Ղղ	ՏՏ	ՎՎ
Յյ	Նն	Շշ	Ոո	Զզ
Պպ	Ղղ	Ռռ	Աս	ՎՎ
Սս	Րր	Կկ	Լ	Փփ
	Քք	Ա	Օօ	Ֆֆ

Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն



Առաւօտ

Մեր աքլորն իրեն թափեց
զիւ ծուղրուղու ձայն տալու:
Զարթէք, ելէք ձեր տեղերից,
գիշերն անցաւ լուսացաւ:

Հաւ ու աքլոր թրփթրփալով
իրենց թառից ցած իջան,
հաւաքւեցին կըռկըռալով
ու մօտեցան տան դռան:

Ահա ծառի արանքներից
ծիտիկները զարթնեցին,
ոստոստալով դէս ու դէնից
ճրկճրկացին, երգեցին:

Երեխայի երազը

1.

Գիշեր է... հայրիկը, մայրիկը և փոքրիկ երեխան անուշ-անուշ քնած են:

—Մայրիկ, մայրիկ,—յանկարծ լսեց երեխայի ձայնը: Մայրը վեր թռաւ քնից:

—Ի՞նչ է պատահել, բալիկս,—հարցրեց մայրը:

—Մայրիկ, Բողարը կծում է ինձ:

Մայրը վեր կացաւ և մօտեցաւ երեխայի անկողնին:

2.

Երեխան կանգնած լաց էր լինում:

—Լաց մի լինիր, բալիկս, այստեղ շուն չըկայ:

—Ա՛յ այստեղ, սեղանի մօտ է Բողարը. տես, ատամները տես... նա ինձ է նայում:

Մայրը վառեց մոմը: Լոյս է: Երեխան վախեցած չորս կողմ նայեց: Ոչինչ չը կայ:

—Տեսա՞ր, երազի մէջ ես եղել, սիրունս, դէ քնի նորից:

Երեխան խորը շունչ քաշեց և պառկեց անկողնում:

Մայրը սրբեց երեխայի աչքերը, համբու-

րեց թուշը և նրան վերմակով ծածկելուց յետոյ, հանգցրեց մոմը:

Սենեակն էլի մթնեց:

Խօսող կարասը

Փոքրիկ Հռիփսիկը խաղում էր կարասի մօտ: Նա կարասի վրա կըռացաւ և ասաց.

—Հճ:

—Հճ.—լսեց կարասի ներսից:

—Ո՞վ ես,—հարցրեց Հռիփսիկը:

—Ե՛ս,—լսեց կարասից:

—Սուրէնն ես, հա՛:

—Հա՛:

—Սուրէն հէ՛յ...

—Հէ՛յ...

—Սուրէն ջան:

—Ջան:

Հռիփսիկը նորից կանչեց.

—Սուրէն, դուրս արի:

—Արի,—լսեց կարասից:

—Դո՛ւ արի, դո՛ւ:

—Դո՛ւ:

—Չէ՛, դո՛ւ, դո՛ւ. ես չէ՛:

—Չէ՛...

Ո՞վ էր խօսում կարասից:

Սև էծիկ

Ճակադ պէծիկ,
Այ իմ սև էծիկ,
Միրուքդ է ձիգ
Ու ծէրը կծիկ...

Արի, ցիկ, ցիկ ցիկ,
Այ իմ սև էծիկ:

Աչքերդ կրակ,
Մի-մի վառ ճրագ.
Ոտքերդ բարակ,
Վազում ես արագ:

Արի ցիկ, ցիկ, ցիկ,
Այ իմ սև էծիկ:


Երեխան և այծը

1.

Գարեգինը չէր սիրում գրել, կարգալ, դասերը սովորել: Ընկերները նրա անունը ծոյլ Գարեգին էին դրել:

Մի օր Գարեգինն ինքն իրեն ասաց. այսօր բոլորին ցոյց եմ տալու, որ ես ծոյլ տղայ չեմ:

Վերցրեց մի գիրք և փողոց դուրս եկաւ:



2.

Փողոցի կողքին մի գերան կար վայր ընկած: Գարեգինը նստեց այդ գերանի վրայ և բաց արեց գիրքը: Քիչ յետոյ նա սկսեց նրնջալ. գլուխը յետ ու առաջ էր շարժում:

3.

Հենց այդ ժամանակ փողոցի միւս կողմից մի այծ մօտեցաւ Գարեգինին: Այծը մեծ-մեծ պոզեր ունէր. ճակատը լայն ու պինդ էր:

Այծը տեսաւ, որ Գարեգինը գլուխը յետ ու առաջ է շարժում:—Ըհը, մտածեց այծը. —ինձ կու՞նի ես կանչում: Շատ լաւ:

Այծը մի քանի քայլ յետ-յետ գնաց և վազելով մօտեցաւ երեսային, կանգնեց յետևի ոտքերի վրա և թըրանխկ... խփեց Գարեգինի ճակատին:

Գարեգինը լաց լինելով տուն փախաւ:



Ծոյլ աղջիկ

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է,
բամբակը կորիզոտ է.

մետաքս պիտի, որ մանեմ,
մաստակ պիտի, որ ծամեմ,
կտուրը տիտիկ անեմ,
անցնողին մտիկ անեմ,
ուտեմ, խմեմ, միթնի քնեմ:

Ստախօս երեխան:

1.

Հայրն իր տղայի հետ զբօսնում էր դաշ-
տում:

Տղան ասաց հորը.

—Հայրիկ, այսօր մի շուն ուզում էր ինձ
կծել: Այդ շունը մի հորթի չափ էր. չէ, ինչ
եմ ասում, մի եզան չափ կը լինէր:

Հայրը մի քիչ ծիծաղեց, բայց ոչինչ
չասաց:

2.

Գամաց-կամաց հայր ու որդի մօտենում
էին մի կամուրջի:

Հայրն ասաց.

—Գիտե՞ս, տղան, ահա մօտենում ենք

ստախօսների կամուրջին:

—Ի՞նչ, ստախօսների կամուրջ:

—Այո, այո, —ասաց հայրը—այս կամուր-
ջը կը փլի, եթէ վրայով մի ստախօս անցնի:
3.

Երեխայի սիրտն ահ ընկաւ: Նա լուռ
քայլում էր հօր կողքից. քիչ յետոյ ասաց հօրը.

—Գիտե՞ս ինչ, հայրիկ, այն շունը եզան
չափ չէր. չէ: Ճիշտն ասեմ, մի հորթի չափ
էր: Հաւատա՞ն, հայրիկ:

—Հա՛ւ, այ տես, մօտենում ենք կամուրջին:

—Կաց, հայրիկ, ո՛ւր ես շտապում, —գո-
ռաց երեխան,—բան եմ ասում. այն շունը
մեր Չամբարիցն էլ փոքրն էր:

Հայրն ասաց.

—Դէ լաւ լսիր, որդի, քեզ մի պատմու-
թիւն եմ անելու:

Ստախօս հովիւը

Մի հովիւ ոչխարներն արածացնում էր
գիւղի մօտ: Յանկարծ բարձր ձայնով գոռաց.

—Գայլը, գայլը, հասէք, օգնեցէք. տա-
րա՛ւ, տարա՛ւ:

Գիւղացիք օգնութեան գնացին. տեսան,
որ հովիւը սուտ է խօսել:

Մէկ շաբաթից յետոյ գայլն ընկաւ այդ

հովւի ոչխարների մէջ:

Հովիւն սկսեց կանչել, — գայլը գայլը:
Գիւղացիք լսեցին, չը հաւատացին և օգնու-
թեան չը գնացին:



Սուրիկի աքլորը

Կի... կի... կի...

Ես աքլորն եմ Սուրիկի:

Նա ինձ գնեց մանէթով,
ուժով կոխեց մի կողով,
բերաւ, գցեց փայտանոց,
զուր անցաւ իմ ճղճղոց:
Հիմի միթիւն էս բանտում
ծղրտում եմ ու կանչում:

Կի... կի... կի...

Ես աքլորն եմ Սուրիկի:

Խորէնն ու հայելին

Փոքրիկ Խորէնը հայելու մէջ մի տղայ տեսաւ:
Այդ տղան նման էր Խորէնին. կարմրաթշիկ էր,
խուճուճ մազեր ու սև աչքեր ունէր:

Հայելու միջի տղան Խորէնին էր նայում, Խո-
րէնն էլ նրան: Խորէնը ժպտաց: Հայելու միջի
տղան էլ ժպտաց:

Խորէնը նրան ձեռքով արաւ և ասաց.

— Արի իմ ձիու վրա նստի ու բռնի:

Հայելու միջի տղան էլ ձեռքով արաւ:

Խորէնը գլուխը շարժեց և ասաց.

— Ո՛չ, դու արի, ես բո մօտ չեմ գալ:

Հայելու միջի տղան էլ գլուխը շարժեց:

Խորէնը բարկացաւ, բռունցքը բարձրացրեց,
որ այն տղային խփի: Այն տղան էլ բռունցքը բար-
ձրացրեց:


Խորէնը բարկացած բռունցքով խփեց հայելու
տղային... բայց ափսոս... հայելին փրշուր-փրշուր
եղաւ:

Արշակը հիւանդ է

Արշակը հիւանդ պառկած է անկողնում: Գլու-
խը ցաւում է, բերանը դառն է, ոչ ուտել է ու-
զում, ոչ՝ խմել:

Բայց ինչ գեղեցիկ օր է դուրսը, ինչպէս կա-
նաչին է տալիս պարտէզը:

Արեն ընկել է Արշակի աչքերին և ասում է.



— Արշակ, ի՞նչ է պատահել քեզ. ինչո՞ւ չես
դուրս գալիս: Տես, ի՞նչ սիրուն օր է. տես, ինչպէս

հասած սալորները կախկըխւած են ծառից: Շնուտ,
դուրս եկ պարտէզ:

*
* *

Քիչ յետոյ ծառի վրա երևում են ծիտիկները.
նրանք թռչկոտում են և ճրտճրտացնում.

—Արշակ, ի՞նչ է պատահել քեզ. ինչո՞ւ չես
դուրս գալիս: Տես, ի՞նչ սիրուն օր է. տես, ի՞նչ-
պէս հասած սալորները կախկըխւած են ծառից:
Շնուտ, դուրս եկ պարտէզ:

Արշակը շատ է ուղում տանից դուրս գալ,
բայց չի կարող, հիւանդ է:

Հաւերն ու կատուն

Պառաւր

Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, իմ վառիկներ,
Սիրուն ճուտեր, հաւ մարիներ,
Ոսկէփետուր աքլարիկներ,
Եկէք, կերէք, ձեր հատիկներ:



Ահա՛, ահա՛, անուշ արէք,
Վեր քաղեցէք, կուշտ-կուշտ կերէք:
Ես տուն կերթամ, քուջուջ արէք,
Երբ որ կանչեմ, ականջ արէք:

Հաւեր

Կուտը կերանք կը՛տ-կը՛տ-կը՛տ.
Երթանք պարտէզ կը՛չ-կը՛չ-կը՛չ:

Աքաղաղներ

Կուտը կերանք ծուղորնուղու,
Հաւ կշտացանք ծուղորնուղու,
Երթանք պարտէզ կուկլուկո՛ւ.
Ուրախ ման գանք կուկլուկո՛ւ:

Մանուկներ

Չար փխիկը մօտ է գալիս,
Սիրուն ձագին մտիկ տալիս.

Թաթը մեկնեց,

Վզից բռնեց.

Աքաղաղներ, հաւ մարիկներ
Պահպանեցէք ձեր ճուտիկներ:



Աքաղաղներ

Գող փխիկը եկել է,
Փամփլիկ ձագին բռնել է:

Հաւեր

Ժողովե՛նք, միանա՛նք,
Չար փխիկին վրա տանք:

Բոլորը

Տեսա՛ք, տեսա՛ք ինչ եղաւ,
Գող կատուն, որ մեզ տեսաւ,
Խիստ վախեցաւ ու փախաւ.
Ուրեմն ապրենք միասին,
Որ մօտ չըգայ թշնամին:

Ս ա գ ե ռ

1.

Սագեր, ան, իմ սիրուն սագեր, ամբողջ օրն օրօրեկով ման էք գալիս, միթէ՞ չէք բեզարում:

Վայ, էլի էք վազում դէպի գետը. ուզում էք նորից լողանալ:

Տեսէք, տեսէք, սագերը գետն են շտապում. ահա լողանում եմ. ջրի տակն են մտնում, վերև բարձրանում, նորից մըտնում, նորից բարձրանում: Ինչպէս թեթև սահում են ջրի երեսին:



2.

Լողանալուց յետոյ սագերը շարան-շարան տուն են շտապում: Տան դռանը կանգնած է տատը, նա սպասում է սագերին:

Սագերը դա, դա, դա կանչելով՝ մօտենում են տատին: Տատը նրանց առաջ կուտ է ածում, նըրանք էլ կրտկրտացնելով ուտում են հատիկները:

3.

Տատը նայում է սագերին և ինքն իրեն ասում. կերէք, կերէք, իմ սագիկներ, կերէք, կշտացէք. թող ձեր փափիկ բմբուլները երկարեն. Սրուսիս, Սուրիկիս համար նոր բարձեր եմ շինելու:—էյ դո՛ւ, սևամէջը անպիտան, միշտ էլ խլում ես

միւսների բաժինը. տես, ինչպէս է չաղացել անպիտանը:

Սագերը չեն լսում տատին, կրտկրտացնում են ու արագ-արագ հաւաքում հատիկները:

Բ ա ղ ի կ

Բաղիկ, բաղիկ,

Կարմիր թաթիկ,

Ո՛ւր ես գնում կամաց-կամաց
Չագուկներդ չորս կողմդ առած:



Ես գնում եմ ջուր գտնելու,

Չագուկներս լանալու.

Չագուկներս մաքուր-մաքուր,

Տղոց երեսը կեղտ է ու մուր:

Կ ա տ ու Ն

Կատուն քնած էր թախտի վրա: Յանկարծ ականջները ցցեց, տեղից վեր կացաւ, իրեն ուղղեց և սկսեց կամաց մոռալ:

Նորից պառկեց. կարծես քնած լինի, բայց չէ, չի քնած:



* *


Սենեակի անկիւնից մի մուկ դուրս եկաւ։
Կատուն գլուխը դրեց առաջին երկու թաթիկներին



մէջ. չի շար-
ժւում, բայց
աչքերը փայ-
լում են։

Մուկը կատ-
ւին դեռ չի տեսել, նա մօտենում է սեղանին։

Կատուն յանկարծ թախտից ներքե է թրուշում,
բռնում է մրկանն ու սենեակից դուրս փախչում։



Կատու

Կատուն եկաւ փիսիկ-փիսիկ,
Հազար նազով ինչպէս հարսիկ.
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց շանչիկներով.
Կատո՛ւ, կատո՛ւ ինչո՞ւ տրտում։

Ա՛, մկներն ե՞ն այսօր արթուն։
Կա՞տուն ասաց.—միած, միած,
Այսինքն թէ՛ այո՛, այո՛։


Մուկիկը

Մեծ մուկը և նրա փոքրիկ աղջիկը սոված էին։
Մառանում մի թակարդ տեսան. թակարդի մէջ
պանրի կտոր էր կախած։ Պանրի հոտը դիպաւ մու-
կիկի բթին։

—Մայրիկ, մայրիկ, տես, ինչ լաւ պանիր է
կախած ա՛յնտեղից։

—Սելըդ կորցրել ե՞ս, որդիս, չե՞ս իմանում, որ
թակարդը մեզ բռնելու համար է շինած։ Զը մօ-
տենա՛ս։

—Մայրիկ ջան, թող մօտենամ, մի բիշ հոտ
քաշեմ,—ասաց մուկիկը և առանց սպասելու, մը-



տաւ թակարդը, ատամներով բռնեց պանրից և
պինդ քաշեց։

Թըրախկ... փակեց թակարդի դուռը։

Այժմ ծըւծըւում է խեղճ մուկիկը.
 —Ծը՛, ծը՛, ծը՛, ծը՛, —Ծը՛, ծը՛, ծը՛, ծը՛,
 չանգոտում է կրծոտում է
 իր թակարդի էն երկաթի
 պինդ կողերը: նեղ ձողերը:

Անվերջ, անվերջ
 կրծոտում է,
 անվերջ, անվերջ
 չանգոտում է.
 բայց թէ գուր,
 բոլորը գուր:

Հաւատարիմ ընկեր

1.

—Հօրեղբայր, ի՞նչ կը լինի, մի պատմութիւն անես,—խնդրեցին Վահանն ու Լուսիկը:

—Ի՞նչ պատմեմ.—ասաց հօրեղբայրը:

—Ի՞նչ որ դու կուզես, պատասխանեցին երեխաները:

—Հա՛ւ, դէ լսեցէք: Երբ ես երեխայ էի, խընդրեցի մայրիկիս, որ թոյլ տայ Ափուի հետ գնամ գետի ափը խաղալու: Նա թոյլ տուց:

—Ո՛վ էր Ափուն, հօրեղբայր,—հարցրեց Վահանը:

—Նա իմ խաղընկերն էր: Ես և Ափուն գնացինք գետի ափը. ես ջրի երեսը մի տախտակ գցե-

ցի, տախտակն այս ու այն կողմն էր գնում, մենք նայում էինք և ուրախանում:

2.

Քիչ յետոյ տախտակը շատ հեռացաւ ափից, ձեռքիս փայտով չէի կարողանում տախտակը յետ քաշել: Ափուին ասացի, որ ջուրը մտնի և տախտակը դուրս քաշի:


Ափուն չըլսեց ինձ, երբ նրա վրա բարկացայ, թողեց֊ փախաւ: Ես էլ մի քար վերցրի և խ֊ փեցի Ափուի գլխին:

—Վայ, հօրեղբայր, այդ ի՞նչ ա֊ րիւր,—գոռաց Վահանը:

Ափուն ծլաց և ընկաւ գետնի վրա. ես օգնութեան չըգնացի, մտայ գե֊

տը, որ տախտակը հանեմ: Ջուրը խորն էր, ընկայ ամենախոր տեղը, քիչ էր մնում, խեղդուէի. սկսեցի օգնութիւն կանչել, բայց գետի մօտ ոչ ոք չըկար: Յանկարծ մէկը բռնեց փեշերիցս և ինձ դուրս քաշեց ջրից: Յետ նայեցի... Ափուն էր:

—Ա՛, ի՞նչ լաւ տղայ է եղել քո ընկեր Ափուն:



Դու ի՞նչ ասացիր նրան, հօրեղբայր,—հարց-
րեց Լուսիկը:

—Ես ձեռքս գցեցի նրա վզովը, լաց եղայ և
ներողութիւն խնդրեցի:

—Իսկ նա ինչ ասաց,—հարցրեց Վահանը:

—Նա հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ արաւ:

—Դէ ճիշտ ասա, հօրեղբայր, ո՞վ էր այդ քաջ
Ափուն:

—Նա մի շուն էր, մի հաւատարիմ, մի քաջ,
մի լաւ շուն:

Շունը

Հաֆ հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ	Բայց թէ մի գող
ահա այսպէս	չար կամեցող
հաչում եմ ես,	ուզի թաքուն
հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,	մտնի մեր տուն,
ու տունն այսպէս	հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
պահում եմ ես:	ահա այսպէս
Թէ գայ մեզ մօտ	հաչում եմ ես.
մի հին ծանօթ,	հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
մօտն եմ վազում	ու տունն այսպէս
պոչըս շարժում:	պահում եմ ես:

Հրաւէր գարնան

Արի գարուն,	Պարզ, սառնորակ.
Արի սիրուն,	Անթիւ հաւքեր,
Ու մեզ դու բեր	Անուշ երգեր,
նաշխուն դաշտեր,	Ծառ ու տերև,
վճիտ առակ,	Պայծառ արև:

Արագիլ

Արագիլ, բարով եկար,
Այ, արագիլ, բարով եկար,
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախացրիր:



Դաշտում

1.

—Հայրիկ, տես, տես, այնտեղ, ծառի տակ
արածում է մեր կովը: Ագիգ, Ագիգ
ջան, արի, արի կովիկ ջան. քեզ խոտ
կըտամ, ջուր կըտամ: Արի բիժի
ջան, բիժի, բիժի, բիժի... Ինձ է
նայում, բայց չի գալիս. Այ, այ,
բառաչում է:





—Ի՞նչ լաւ է այս-
տեղ, հայրիկ, Տէս,
թռչում են աղաւնի-
ները. յոպոպը կան-
չում է. յոպ-ոպ, յոպ-
ոպ. բզգում են մե-
ղունները, տրգտրգում
բզեզները, թռչկո-
տում թիթեռները:

Տէս, առւի մօտ

խնչբան՝ սպիտակ, կարմիր, դեղին ծաղիկներ կան:
Հայրիկ, եկ մայրիկի համար ծաղիկէ մի փունջ
կապենք:

Երեխան վա-
զում է առւի ափը
ծաղիկ քաղելու:

—Զգոյշ կաց,
աղջիկս, ջուրը չը-
նկնես:

—Հայրիկ, հայ-
րիկ, այս կողմ եկ
ու քաղի առւի ա-
փի, այ, էն նարգի-
զը, տես, ի՞նչբան
սիրուն է. մայրիկը
շատ կուրախանայ:



Ահա ծաղեց արեգակը,
Ահա ծաղկեց մանուշակը,
Մեղուն թողեց իր փեթակը
Տրգտրգալով, տրգտրգալով:



Մեղուն թռաւ ծաղիկէ ծաղիկ.
Մեղը առաւ քաղցր անուշիկ.
Անուշ մեղրը մանր տրդոց,
Իսկ չարերին կըճ ու խայթոց:

Մանուկ և թիթեռ

Մանուկ

Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչով ես դու ապրում,
Ամբողջ օրը խաղում ես,
Ինչպէս է, որ չես յոգնում:



Թիթեռ

Սիրուն կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղիկների հոտն անուշ
Իմ կերակուրս է միակ:
Բայց իմ կեանքը շատ կարճ է,


Նա մի օրից չէ երկար,
Բարի եղիր, ով մանուկ,
Խնայիր ինձ, ձեռ մի տար:

Ծիտիկներ

1.

Գարնան մի սիրուն օր է: Այսօր ճաշում ենք
մեր բակի տանձենու տակ:

Ահա թռթռալով մօտենում է մեզ մի ծիտիկ



և ծիւ, ծիւ է կանչում: Հասկանում եմ նրա
միտքն ու մի կտոր հաց եմ գցում առաջը:

Ծիտիկը կտուցով բռնում է հացի կտորը և
ուզում է ուտել:

2.

Մի ուրիշ ծիտ տեսնում է հացի կտորը, վրա

է հասնում և բարկացած ծիւ, ծիւ՝ տուր, տուր է
կանչում:

Առաջին ծիտիկը ծիւ, ծիւ՝ ոչ, ոչ է ասում և
հացը բերանն առած՝ թռչում, փախչում է:

Միւս ծիտը յետևիցն է ընկնում. առաջին ծի-
տը կուլ է տալիս հացի կտորը և նորից է մօտե-
նում մեզ: Նրա յետևից գալիս են ուրիշ շատ
ծտեր:

3.

Ծիտիկները չեն վախենում մեզնից, թռչկո-
տում են մեր շորս կողմը: Մենք հացի փշրանքներ
ենք թափում: Խեղճերը սոված են. վրա են թռ-
չում, հալաքում են փշրանքները և ծըծըւում.
ծիւ, ծիւ, ծիւ՝ էլի, էլի, էլի:

Ես յանկարծ շարժում եմ ձեռքս սեղանի վրա-
յից մի բան վերցնելու համար: Ծտերը թռթռա-
ով, ծըծըւալով փախչում են:

Ուր էք փախչում այ թռթռուան, ծըծըւան,
վախկոտ ծիտիկներ:

Ծտի հարսանիք

Ծիտիկները հարսանիք ունեն,

— Ճըզը՛ր-վըզը՛ր,

ճըզը՛ր-վըզը՛ր...

Ինչ գըժոց է կադնի ծոռին,
այգու պատին, կտրան ծէրին.

տասը, քսան, հարիւր, հազար
պար են գալիս՝ էլ քանի պար:

Միրգ են բերել մէրու ծառից,
կուտ են բերել ճամփաներից.—
գարի, կորեկ, հանդից, արտից:
Հարսն ասաց.— էս քիչ է, քիչ:
Թը՛ռռ, դէ թռէ՛ք,
էլի բերենք:



—Թմբիկ ծիտիկ, ի՞նչ ես բերել:
—Մի հատ հաճար:
—Բմբիկ ծիտիկ, ի՞նչ ես բերել:
—Կանաչ բանջար:
—Բա դո՛ւ Պստիկ:
—Ձիւր ու չամիչ:
—Բա դո՛ւ, Չստիկ:
—Գորեկ մի քիչ:
—Բա դո՛ւ, պստիկ, սիրուն ծիտիկ:
—Ե՛ս... մոռացայ... բան չբերի:
Թը՛ռռ, դէ թռէ՛ք,
զնանք բերենք:

Այն ո՞վ է...

Դպրոց եմ գնում. ճանապարհին յանկարծ մէ-
կը գլխարկս վայր է գցում. յետ եմ նայում, բայց
ոչ ոք չըկայ:

Ուզում եմ առաջ գնալ. մէկն ինձ յետ է հը-
րում և գլխարկս ուզում է էլի փախցնել: Նայում
եմ, բայց ոչ ոքի չեմ տեսնում:

Մէկը գլխիս վերևը ունում է, վեր եմ նայում.
ծառի ճիւղերն իրար են կաշում, կարծես թէ, մէ-
կը շարժում է, բայց շարժողը չի երևում:

Ասա, այս բոլորն անողն ո՞վ է:

Արև

Արև, արև, եկ, եկ,
զիզի քարին վեր եկ.
սև-սև ամպեր հեռացէք,
արևին ճամպայ տւէք.
Թողէք գայ մեզ մօտ,
նրա լուսին ենք կարօտ:

Կարմիր արև, եկ, եկ,
նախշուն քարին վեր եկ:
Արևն յաղթեց ամպերին,
շողքը ձգեց սարերին.
զիզի քարը տե՛ս, տե՛ս,

Պսաղոսւմ է ոսկու պէս:
Սիրուն արեւ միշտ եկ,
Զիզի քարին վեր եկ:

Անհնազանդ նապաստակը

1.

Քաջ ճուտիկը

Արեւը նոր էր մայր մտնում: Նապաստակ հայ-
րիկն ասաց իր ճուտիկներին.

— Հանգիստ կը մնաք, երեխայք, դուրս չը գաք
բնից: Ես մայրիկի հետ դաշտն եմ գնում ձեզ
համար կաղամբ բերելու:



Ծնողների գնալուց յետոյ,
փոքրիկ տղայ-նապաստակն ասաց
քոյրերին.

— Ուզում եմ ես էլ դաշտ
գնալ. մի տեսնեմ, թէ այդ ինչ

բան է գաշտը:

Քոյրերն ասացին.

— Զէ, չէ, այդպէս բան չանես, մէկ էլ տեսար
վրա հասաւ հաֆ-հաֆը. նա քեզ մի անգամից
կուլ կը տայ:

Եղբայրն ահանջ չարեց. իրեն մեծի տեղ դրաւ
և ասաց.

— Էհ, ինձ չէք ճանաչում. դէ մի գայ հաֆ-
հաֆն ու տեսնի...

Ասաց ու գնաց:

2.

Դաշտում և բանջարանոցում

Փոքրիկ նապաստակը դաշտը հասաւ: Ինչպէս
թարմ ու անուշ է այնտեղի խոտը և ինչքան էլ
տոտա: Ապա ինչպէս քաղցր կը լինին բանջարա-
նոցի գազարն ու կաղամբը. նապաստակ ճուտիկը
բանջարանոցի մի անցքից ներս մտաւ և մի լսւ
փորձեց կաղամբների համր:

Տուն գնալու ժամանակ շատ կայ, գազարի
համն էլ փորձեմ, մտածեց փոքրիկ նապաստակը:

3.

Վու-վուն

Երբ լաւ մթնեց, ճուտիկն ուզեց տուն դառ-
նալ: Ման է գալիս այն անցքին, որտեղից մտել
էր, բայց անցքը չըկայ ու չըկայ:



Օդի մէջ մի բան է թռչում և վո-
վոլ է կանչում: Փոքրիկ նապաստակը
կծկում է խոտերի մէջ, կպչում է
գետնին, դողում է վախից և մտա-
ծում, ախ, ուր է, ուր է սիրելի մայ-
րիկս, ախ, ինչո՞ւ չը լսեցի հայրիկին:

4.

Մայրիկը գալիս է...


Յանկարծ ցորենի արտի միջից մի բարակ
ձայն է լսւում.

— Զագուկս, սիրելիս, ուր ես, ուր ես. հրտեղ

ես կորել:

—Ա, մայրիկս է,
—մտածում է ճու-
տիկը, — մայրիկ,
մայրիկ, այստեղ
եմ, բանջարանո-
ցումն եմ:

Մայրը գտնում
է անցքը, ներս է մտնում և ազատում որդուն:



Հովւի անկողին

Սարի լանջը մահճակալ,
Չեչոտ քարը գլխակալ.
Մի հին կարպետ ուսերին,
Այս է հովւի անկողին:

Երբ անձրև է կաթկաթում
եւ կարպետը թրխթրխում,
Հովիւն անուշ քնի մէջ
Քաղցր երազ է տեսնում,
Եւ խնդում, ծիծաղում.
Ուխտայ, ուխտայ, սիրուն հովիւ
Քունդ անուշ...

Տաւարածի ճաշը

Մի խամ տաւարած,
Բաւական քաղցած,
Աղբրի մօտ նստած,
Ուտում էր չոր հաց:

—Ցամաք մի ուտիլ,
Ասաց ընկերը:
—Բա ինչո՞վ ըւտեմ,
Ուրիշ բան չունեմ:
—Դանակով եղբայր, դանակով...
—Այդ լաւ ասացիր:
Դանակով կտրեմ,
Ջրումը թրջեմ,
Էլ ցամաք չուտեմ:

Գայլն ու էջը

Անտառի մօտ մի էջ էր արածում իր ձագուկի
հետ: Իշին մէկ գայլ մօտեցաւ և ասաց.

—Բարեկամ, ի՞նչ արժէ քուռակդ:

—Նայի յետևի ոտիս նալին, այնտեղ գրած է:

Էջը ոտը բարձրացրեց. գայլը սկսեց նայել:
Էջն այնպէս քացի տւեց գայլի քիթ ու բերնին, որ
գայլը վայր ընկաւ գետնին:



Կ ի Թ

Ասա, տեսնեմ, մեր գիւղում
Կովերն ինչպէս են կթում:

Ահա այսպէս են կթում,
Ծիծը խլում հորթուկից,
Հորթը կապում մօր ծնկից,
Կովկիթն իրենց գոգն առնում,
Կովի կողքին կրկրզում

Փըշշ-բըթթ

Փըշշ-բըթթ.


Ոնց են հարում խնոցին

Թուկը ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու ծայրից բռնեցին,
Տարան, բերին, շարժեցին,
Թըլըխկ-չըլըխկ
չըլըխկ-թըլըխկ.

Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին:

Ոչխարն ու գառը

Ինչո՞ւ կուլաս, գո՞ւ գառնիկ:
Խիստ ծեծ կերայես, մայրիկ:
Ո՞վ ծեծեց քեզ, գառնիկ:
Մէկ չար կնիկ, իմ մայրիկ:
Ինչո՞ւ ծեծեց քեզ, գառնիկ:



Ծառի տակն էի, իմ մայրիկ:
Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ:
Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ:
Ի՞նչպէս լացիր, գո՞ւ, գառնիկ:
Մէ, մէ, մէ, մէ, իմ մայրիկ:

Անտառի մանուկը

Անտառի խորքում մի ճօճ կար կապած և նրա
մէջ մի մանուկ դրած: Լաց էր լինում մանուկը:
Մայր չըկար մօտը, որ ծիծ տար, հայր չըկար,
որ պահպանէր: Անտառում մարդ
չըկար:



Մի պախրակով՝ կաթնալից
կրծքով՝ եկաւ ճօճի մօտ իր հոր-
թուկի հետ և տխուր ձայնով երեխին ասեց.

Սիրուն երեխայ, որք ես մնացել.
Քո անբախտ մօրը գերի են տարել.
Նա գնաց, կորաւ, էլ ետ չի գալու,
էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով,

Ճօճի մէջ կապեց, նանիկ ասելով.
 Նա լաց էր լինում աղի արցունքով,
 Իր վերջին նանիկն ասում էր լալով.

«Մեծատերև թաթաշոր,

Մանրատերև ոտաշոր,

Քամին կանի՝ ժաժ կը տայ,

Պախըէն կը գայ՝ ծիծ կը տայ»:

Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,

Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պէս:

2.

Պախրան ծիծ տըլաւ երեխին, երեխան կշտա-
 ցաւ ու քնեց: Պախրան իր հորթին թողեց երեխի
 մօտ, իսկ ինքը գնաց մօտերքում արածելու, որ
 կաթը շատացնի և գայ երկուսին էլ ծիծ տայ:

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան և նա-
 նիկ ասեց. —

Նանիկ արա, նանիկ, նանիկ.

Նանիկ արա, սիրուն մանիկիկ.

Ահա կը գայ իմ մայրիկը

Կուրծք ու ծըծեր կաթով լիբը...

Ամեն գետնի նա չի նստում,

Ամեն խոտից նա չի արածում,

Նա չի խմում ամեն ջրից,

Աղ չի լիզում ամեն քարից:

Նա սարէսար ման է գալիս,

Որք է գտնում ծիծ է տալիս,

Որտեղ որ է, ահա կը գայ.

Ինձ էլ, քեզ էլ, կուշտ ծիծ կը տայ:



Նանիկ արա, նանիկ, նանիկ,

Նանիկ արա, սիրուն բալիկ...

Պախրան կուրծքը լիբը յետ դարձաւ արօտա-
 տեղից և ծիծ տըլաւ երեխին էլ, հորթին էլ:

Ով որ տարով կը մեծանար, մեր երեխան օրով
 մեծացաւ: Շատ չանցաւ, նա՛ գուրս եկաւ ճօճից,
 մէկ օր չորեքթաթ տուաւ, միւս օրը ոտքի կանգ-
 նեց. մի քանի անգամ սահեց, վայր ընկաւ, բայց
 շուտով ամրացաւ և սկսեց պախրի ետեից վազ-
 վըզել:

3.

Մի թագաւոր որդի չունէր. երագունքն ասա-
 ցին. «Թագաւոր, դու մի որդի կը գտնես անտառի
 խորքում»:

Մէկ անգամ այս անգաւակ թագաւորը որսի
 գնաց իր որսորդներին հետ: Շատ ման եկան, ոչինչ
 չը գտան, բայց որ հասան անտառի խորքը, այն-
 տեղ մի պախրի հետք գտան և նրա մօտ երեխի
 ոտնատեղեր:

Ամենքը մնացին զարմացած և չէին հաւատում,
 որ ոտնատեղերը երեխի կը լինի, բայց թագաւորը
 յիշեց իր երագը և հրամայեց որսորդներին, որ ե-
 րեխայի հետքը բռնեն, ուր որ լինի՝ գտնեն նրան:

Որսորդները գնացին և երկու ժամ չանցած՝
 մի սիրուն երեխայ բերին թագաւորի մօտ և պատ-
 մեցին, թէ ինչպէս գտան նրան պախրի ծիծը ծը-
 ծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ, երեխին գրկեց,

համբուրեց և անուշը դրեց Պախրատուր:

Պախրատուրը մեծացաւ թագաւորի պալատում, լաւ ուսում առաւ, վերջը դառաւ թագաւոր և մեծ զօրքով գնաց իր մօրն ազատեց գերութիւնից:

Կրկու



Լինում է մի սար,
էն սարում մի ծառ,
էն ծառում փչակ,
Փչակում մի բուն,
Բրնում երեք ձագ,
Ու վրէն կրկուն:

Կո՛ւ-կու, կո՛ւ-կու, իմ կուկուներ,
երբ պիտի դուք առնէք թևեր,
Թըռչէք, գրնաք,
Ուրախանաք...

Մկների թագաւորի թաղումը



Լայն գաշտում մի
խումբ մկներ հաւաք-
ւած ծըծւում էին:

Մի ճնճղուկ մօտե-
ցաւ ու հարցրեց.

— Ծըծըւան մկներ, ինչո՞ւ էք սգաւոր:

— Մեր թագաւորն է մեռել, — պատասխանեցին
մկները:

— Ճիւ-ճիւ-ճիւ, ես էլ կը սգամ ողորմածի
մահը:

Ճնճղուկը միացաւ մրկների խմբին ու սկսեց
սգալ:

*
*
*

Քիչ յետոյ եկաւ սարեկը.

— Ճիւի-վիւի ճնճղուկ, ինչո՞ւ ես սգաւոր:

— Ծըծըւան մկներին հարցրո՛ւ:

— Ծըծւան մկներ ինչո՞ւ էք սգաւոր:

— Մեր մեծն է մեռել:

— Ճիւտ-պիտ, ճիւտ-պիտ, ես էլ ձեզ հետ կը
սգամ ողորմածի մահը:

Ճիւտի-պիտի սարեկն էլ միացաւ նրանց:

*
*
*

Ճանապարհին մի քարիկ զլորւելով անցնում
էր. տեսաւ սգաւոր խումբը՝ առաւ.

Ճիւտի-պիտի սարեկ, ճիւի-վիւի ճնճղուկ, ծը-
ծըւան մկներ, ինչո՞ւ էք սգաւոր:

— Մկների թագաւորն է մեռել, — պատասխա-
նեցին:

Գըլգոր-մըլգոր քարիկն էլ միացաւ նրանց:

*
*
*

Այդտեղ մի մեծ ծառ կար. մէկ ճիւղը փոթոր-
կից կոտրւել էր: Ծառը տեսաւ, որ ով գալիս է,
սգում է, հարցրեց.

— Գըլգոր-մըլգոր քարիկ, ճիւտի-պիտի սարեկ,
ճիւի-վիւի ճնճղուկ, ինչո՞ւ էք սգաւոր:

— Մկների թագաւորն է մեռել:

Ճղկոտոր ծառն էլ իր տեղում սգաց:

* *

Այգեղից անցնում էր մի ծեր այգի ջրոդ բահը ուսին. տեսաւ սգաւոր խուժըրը և հարցրեց.

—Ճղկոտոր ծառիկ, գլգոր-մլգոր քարիկ, ճիտի-պիտի սարեկ, ճիլի-վիլի ճնճղուկ, ծըւծըւան մկներ, ինչո՞ւ էք սգաւոր:

—Մկների թագաւորն է մեռել,—պատասխանեցին միասին:

Այգի ջրոդն էլ իր բահը կտորեց, վայ տւաւ գլխին ու նրանց հետ սգաց:

* *

Կէս օր էր, ճաշի ժամանակ էր: Եկաւ հաց բերող աղջիկը:

—Վայ, վայ, վայ, այս ի՞նչ է, բահկոտոր պապի, ճղկոտոր ծառիկ, գլգոր-մլգոր քարիկ, ճիտի-պիտի սարեկ, ճիլի-վիլի ճնճղուկ, ծըւծըւան մրկներ, ինչո՞ւ էք սգաւոր:

—Մկների թագաւորն է մեռել: Սիրուն աղջիկ գնա, ձեր տէրտէրին խորհուրդ հարցրու, թէ ինչ-պէս թաղենք:

* *

Աղջիկն առանց սպասելու, մածունը գլխին ածեց, քուն հասաւ և ամեն բան պատմեց պառաւ մօրը: Պառաւն էլ իր ճախարակը կտորեց, և երկուսով գնացին քահանայի մօտ:


—Ես իրաւունք չունեմ մկներ թաղելու,—ասաց տէրտէրը:

Ճախարակ-կոտոր պառաւն ու մածնոտ-գլուխ աղջիկը թողեցին տէրտէրին և գնացին հասան սրգաւոր խմբին:

* *

Բոլորը միասին խորհրդի նստեցին: Միտք տւին, միտք առան. երկար բարակ մտածեցին, վերջը որոշեցին, որ բահկոտորը գերեզման փորի, ճիտի-պիտին՝ թաղման կարգը կատարի, ճիլի-վիլին՝ դպիր լինի, իսկ ծըւծըւանները դադաղը տանեն:

Ճղկոտորի կտորւած ճիւղից դադաղ շինեցին և մկների թագաւորին փառաւոր թաղեցին: Գլգոր-մլգոր քարիկն էլ գերեզմանաքար եղաւ: Երեք օր սուգ պահեցին, յետոյ մխիթարական խօսքեր ասացին իրար և ամեն մէկն իր գործին գնաց:



Սոված գայլը

1.

Սոված գայլը դէս ընկաւ, դէն ընկաւ, հօտից հեռացած մի ոչխար տեսաւ, ու ասաց.

—Այ ոչխար, բեզ պէտք է ուտեմ:

—Ուտում ես կեր, —ասաց ոչխարը, —բայց չես կշտանալ... վրաս կաշիս ու ոսկորս է մնացել: Եղբայրս գէր է. սպասիր վաղեմ եղբօրս կանչեմ, նրան կեր:

—Շատ լաւ, —համաձայնեց գայլը:

Ոչխարը մայելով առաջ վազեց, հասաւ հօտին, ու էլ ետ չեկաւ:

2.

Սոված գայլը դէս ընկաւ, դէն ընկաւ, տեսաւ մի ձի դաշտում մենակ արածելիս, ու ասաց.

—Այ ձի, բեզ պէտք է ուտեմ:

—Ուտում ես կեր, —ասաց ձին, —բայց մեղք ես. պայտերս հանիր, որ ուտելիս կոկորդդ չը չանգուի:

—Շատ լաւ, —համաձայնեց գայլը:

—Ձին ետեի ոտը բարձրացրեց:

Գայլը մօտեցաւ, որ պայտի մեխերը հանի: Ձին այնպէս բացի հասցրեց, որ գայլը վայր ընկաւ, ատամներից մէ քանիսը ջարդւեցին, աչքերը մըթնեցին, ու էլ չը տեսաւ, թէ ձին ուր փախաւ:

3.

Սոված գայլը ոռնալով վեր կացաւ, դէս ընկաւ, դէն ընկաւ, գիւղից դուրս մի էջ տեսաւ, ու ասաց.

—Այ էջ, բեզ հօ պէտք է ուտեմ ու ուտեմ:

—Ուտում ես կեր, —ասաց էջը, —բայց թող որ մեռնելուց առաջ մի լաւ գոռամ. յետոյ կեր:

—Շատ լաւ, —համաձայնեց գայլը:



էջը սկսեց զոռալ, գայլն էլ առաջը պղպել էր և ուրախութիւնից ոռնում էր:

Գիւղի շները լսեցին, դուրս թափւեցին: Գայլը հազիւ փախաւ, աղատւեց ու իրեն գցեց իր բունը:

4.

Գայլը բնում կծկւեց ու այսպէս խօսեց.


—Տօ, դու միս մորթող էիր, որ նիհարն ու գէրն էիր ջոկում:

—Տօ, դու պայտա՞ն էիր, որ ձիու պայտերն էիր բաշում:

—Տօ, դու աշուղ էիր, որ իշի հետ խաղ էիր ասում: Ախ, երանի այստեղ մի մարդ լինէր, պոչիցդ բռնէր, տուր թէ կըտան մէջքիդ, կողքերիդ, մին երկու, մին երկու...

Անձրեւ էր եկել, նախրապանի տղան մտել էր գայլի բունը: Լսեց գայլի խօսքերը, պոչից բռնեց, այ թէ կըտան: Գայլը մի կերպ աղատում է պոչը, փախչում է ու ասում.

—Մարդ իր տանն էլ չը կարենայ հանգիստ ինքն իրեն զրոյց անել. բա այսպէս էլ աշխարհ...



Կրկուն

Այնտեղ, հեռու գետափին,
Նա կորցրեց ձագերին
Ու կանչում է. կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ...
Ման է գալիս, անյոյս ճշում
Կանաչ, ցօղոտ մարգերում
Ու կանչում՝ կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ:
Ձագերին է փնտրում, կանչում,
Մեղմ, տխուր երգ ասում.
Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ...



Ց Ա Ն Կ

Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն Ի

I Մանկական կեանք

1. Առաւօտ. Հայրնապետեան	47
2. Երեխայի երազը	48
3. Խօսող կարասը	49
4. Սև էծիկ Յ. Աղարար	50
5. Երեխան և այծը	50
6. Ծոյլ աղջիկ	52
7. Ստախօս երեխան	52
8. Սուրիկի արդորը. Հայրնապետ	54
9. Խորէնն ու հայելին	54
10. Արշալը հիւանդ է	55

II Տանու կենդանիներ

11. Հաւերն ու կատուն Մ. Մամիկոնեան	56
12. Սագերը	58
13. Բաղիկ Գ. Բաթիպա	59
14. Կատուն	59
15. Կատու Գ. Բաթիպա	60
16. Մուկիկը—ոտ. Աղար	61
17. Հաւատարիմ ընկեր	62
18. Շունը Յ. Թումանեան	64

III Գարուն

19. Հրաւիր դարնան Մոմոտեան	65
20. Արագիլ (Ժողովրդ.)	65
21. Դաշտում	65
22. Մեղու Գ. Բաթիպա	67

23. Մանուկ և թիթեռ	67
24. Ծիափկներ	68
25. Ծափ հարսանիք Դ. Դեմիրճեան	69
26. Այն ով է	71
27. Արև Դ. Աղայեան	71
28. Անհնազանդ հապառուսիք	72

IV Սարում

29. Հովի ահկողին Դ. Աղայեան	74
30. Տաւարածի ճաշը Դ. Աղայեան	75
31. Գայլն ու էշը	75
32. Կիթ Արարատեան	76
33. Ոնց են հարում խնոցին Արարատեան	76
34. Ոչխարն ու գառը	77

V Կենդանական վեպեր

35. Անառի մանուկը Դ. Աղայեան	77
36. Մկների թագաւորի թաղումը Ե. Տ. Խաչատր	80
37. Սոված գայլը Ստ. Լիսիցեան	83
— — — — —	
38. Կըկու Յ. Թումանեան	80
39. Կըկուն Ռուսերէնից	86

3620

ՀՀ Ազգային գրադարան



NL0280403

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՑՍ ՏԵՍԱԾ ԳՐԲԵՐԸ

	Կող.
Kritik der Zillerschen Formalstufentheorie	50
Գնահատություն Յիլլերի ձևական աստիճանների	50
Շանթի Հին Աստվածները	15
Դասական դժան ձևեր	50
Դասական դժան ինդիքներ	65
Դադարակնական որբանոցներ	25
Անգլաք Մանդրինեան	20
Մանկավարժական ժողովածու	40
Փայլուն արև (այբբենարան)	—

Ընդ տեսակ և վաճառում է Համառոտ ուղեցույց «Փայլուն արև» այբբենարանի 20 կ.